# 26. ՄԻԱՄԻՏ ՄԱՐԹ

Իրիկ, կնիկըմ կըլնի: Մարթն շատ միամիտ մարթ կըլնի: Ամեն օր կնիկ ալյուր կմաղի: Ծեթ ալյուրն կանի ուր խայ, թեփն կանի իրկան խայ:

Իրիյ կնգյան կասի. - Ջանըմ, ես մեռա: Ամենամաքուր յորեն մե, փանեմ ճաղայ, մաքուր ծեթ կաղամ, կպիրեմ: Տյու էսւս ի՞նչ կանես, զի թեփե խայ կկիրիցուցես:

Կնիկ կասի իրկան. - Որ կխառըցուցեցես, քյո քյեռ գյեռ ֆըլւսն փեղն ի, ադարսըզ կնիյ մ'ի: Կէլնի ուր խալավ կխայնի, ուր կչըխչըփի անծկուփոր կէլնի, ունոր քյամին կզարկի, ւըրի ծեթ կէրթա, պետ կմնա:

- Որ ըսկոն ի, ես պիտի էլնեմ էրթամ էն քյեռ ըսպանեմ:

Ուր թուր կկապի վեր ուր, կինի փյուս:

Շատ կէրթա, քիչ կէրթա, կխասնի փաշփիմ մեչ, հ'ախպըրիմ վրեն կնըստի: Կիրիշկա, արոփ, խոփ, ծաղկունքյ փար փաշփ պըռներ են:

Ամա ոչխըրի, փավրի նըմուշ չէրևա: Մարթն ուր թեփե խայ կթալի մեչ ճըրին, կըփորըմ կուփի:

Կասի. «Մեյ կըփոր պառկեմ քյնեմ»:

Կիրիշկա, կես քուն ի, կես հ'արթյուն, քյամիմ կէլնի: Ըսկուն սաստիկ ի, որ մարթուն գյետնիյ կվիրույի:

Վիշապըմ խասեխաս կուգյա վեր մարթուն:

Մարթըն ուր էն կանդար ճարփըրեց, որ թուրն իփուր ուր առած, վիշապի փորը քյաշվավ, թուրն վիշապին կըփրեց, արաց էրկու կըփոր:

Մարթըն պոչի փեխեն էլավ փյուս: Ինքյ թողեց կընաւյ:

Կընաւց փեսավ չոր փաշփի մեչ ոչխար գյեռ կարածա:

Խովիվն ասաց մարթուն. - Ջանըմ, օյըն ուր պորփով, խավքյըն ուր թիվով էսա ճամխից չէր կանի գյա, փյու ի՞նչըխ էկար: Էս ա յոթ փարի ի էսա ճամխից մարթ չկանա ընցնե, փառնա:

- Ընչի՞ մարթ չընցըննե, փառնա:

- Վիշապմ' ի փայդս էլե: Էն վիշապից փյու ի՞նչըխ ազատվար:

- Էն վիշապ ես խապուցի:

Կասի. - Դե՛ փյու ննսփի մոփ իմ ոչխար, ես էրթամ աչկեմ, գյամ:

Մարթն էլավ կընուց աչկելու: Տեսավ խավքյեր-գյելեր թափած վեր լեշին, կուփեն: Տառցավ էկավ:

Ասաց. - Տյու իմ մսաֆըրն ես, քյե կփանեմ իմ փուն, աղորթ ի քյո խաբար:

Իրիկուն էկան փուն, ոխչար խըճեցին գյեոմ, միսցի կընացին փուն: Խաց փըրին, որ ուփեն:

- Դե՛ խաց կե:

Ասաց. - Խաց չեմ ուփե:

- Ընչի՞ չես ուփե:

Ասաց. - Կիրիշկամ քյո փան մեչ իրեքյ գյեշ պան կփիսնամ, էնա կնիկ կապիր ես, խայլիկ փրեր ես փեմ, իրես մըրեր ես: Էնա խալիվորն էլ կապիր ես սուն, էնա շուն էլ փըրեր ես պամբըկի մեչ, մենակ ակընջներ կէրևա: Չուր չասե՞ս, քյո խաց չեմ ուփի:

Ասաց. - Էսա կընիկ որ կա, իմ կնիյն ի. քյանձ զի բաբուզյիթ փղա կա՞. զի կթողներ, կէրթեր ուրիշ ըսկոն չընչոփ մարթըմ կսիրեր որ մարթ պընպուլ իրես չէր թալե: Ես էլ ավքյարից կապեր եմ սուն, ըսկուն եմ արե:

- Էն աղեկ: Էնա խեղճ խալիվո՞րն քյե ի՞նչ արե:

- Էն իմ խերն ի, իմ փուն՝ խաց պակաս չի, եղ պակաս չի, միս պակաս չի, իմ փուն կթողներ, կէրթեր կմուրեր, կպիրեր կուփեր: ես էլ ինափու պիրի կապիցի սուն, օրեն իրեքյ փիր խաց կուփամ կուփի:

- Էն էլ աղեկ: Էսա շու՞ն ընչի ես փըրե մեչ պամբըկին:

- Էն էլ իմ շուն ի: Ես իմ դյուշման կըռվանքյ: Իմ դյուշման զի իփիր գյեփին, որ զի ըսպաներ: Իմ շուն յիփիվանց իզար, իմ դյուշմընի պըլորներ կըփրեց, իմ դյուշման ինգյավ գյեփին, ես էլ էլա ինոր ըսպանի: Մըկա իմ շան ըսկընա պափիվ եմ պռնե, կարծե՞ թե չէ:

Կասի. - Շափ աղեկ ես արե:

Մսաֆըր մարթըն կասի. - Կնիկ, փյու խոսքյ կուփա՞ս քյո մեղաց փառնալուն, որ ես պարեխոսեմ քյե ազափի էփա կապ-չըվնիցն:

Ասաց. - Իսկի՛ խոսք չեմ փա, զի մ'ազափե էփա փեղից, խե արիվուն էլեր եմ, խե արիվուն էլ պիփի մըփնեմ:

- Դե կա՛ց էփա փեղ, քյո փեղն էփա փեղն ի՝ որ կա:

Կփառնա խոր կասի. - Խալիվոր, քյո փուն ամեն պան կա, փյու չըլուփ-պեպիկ չես, անոթի-ծարավ չես, փյու ընչի՞ կէրթաս ժողով կանես: Տյու թարկ կուփաս էփա պան, որ քյե ազափեմ:

Կասի. - Ըսկուն եմ սավրե, ըսկուն կանեմ:

- Քյոն էլ փեղն՝ էփա փեղն ի:

Կփառնա խռվըվուն կասի. - Քյո շուն լավ պախես:

Կնըսփեն մեյ փեղ ուրենց խաց կուփեն, պառկեն կքնեն: Առափուն մարթն կէլնի, կաց պարև կանի, կէրթա ուր ճամբախ:

Շատ, քիչ ապրված կիտի, կէրթա փիսնա իրեքյ մարթ մեյ մեկը կթըփեն:

Կէրթա մո մարթեր. - Տյուքյ ընչի՞, - կասի, - մեյ մեկ կթըփեք:

Մարթեր կկայնեն, կասեն. - Մենք կընայինք Ըստամբեոլ, պայման արիյինք խեփ մեյ մեկելի. ինչ որ աշխատենք, մեյ տեղ կիսենք: Մըկա մենք խարիր իսունը խինգյ կուռուշ փարա ենքյ պիրե, խինգյ կուռուշի վերեն չենք կանա հարմարե, մեյ մեկը կթըփենքյ:

- Ես ծեր փարեն կկիսեմ, դե նստեքյ ըստեղ. - կասի, - ասեքյ՝ խենքյ որը՞տ ծեր կնգյա վերեն զոռքութեն եքյ արե:

Էն մեկըն կասի. - Ավուր մեկին մեր տուն քյըֆթա իվփն: Իմ կնիկ քյուֆթի պուտուկ փիրեց թոներ, կընաց ճրյու: Ես էլա պուտկի պերան պացի, պուտկից քյուֆթի գյըլեոխըմ խանիցի, թալիցի պերանըս տաքյ-տաքյ, պերանս իրիցեց: Էլ չկարցա ուտի: Էտա կըտոր գյախ կնիյա մտավ ներս, տեսավ իմ պերան ուռե, իմ թուշ տըճկե: Ասաց. «Վա՜խ, վա՜խ, իմ տուն ավիրեր ի, իմ մարթու իրես խոց իլե»: Էլավ ուսթուրեն իպե, թալեց իմ իրես ճըղեց, քյըֆթի գյըլեոխ, խոց դեյի, իմ պենից իխան տյուս: Ես էլ արընթըթախ էլա փախա: Քիչըմ լարեց իմ իտև իմ կնիկ, տառցավ կընաց տուն: Էլ ես չգյըխշայի էրթալ իմ տուն, թողի կընայի կարիքութեն: Հելե՜ էն էրթալն ի, էն էրթա՜լն ի:

Մարթըն տառցավ էն մեկելին ասաց. - Ախպեր, դե տյու ասա՛, խենքյ քյո գյըլեոխն ի՞նչ իկեր ի:

Ասաց. - Մե ոչխարըմ էլ կեր, կով էլ կեր: Իմ կնիկ պրտյուճ եղ չէր իտե ես ուտի: Իմ կնիկ էլա՛վ տյուս առավոտուն, ես էլա ամնից քիչըմ եղ գյեողցա, տրի իմ քոլոզի մեչ: Իմ կնիյ տըռնեն մտավ, թոներ կըպուց: Ասաց. «Գյբոդի տարած, արե՛ ցան տու թոներ»: Չի նըստըցուց վեր թորվան, թորվան գյեոլն իզար, եղ խալավ: Իմ կնիկ զիկ ասաց. «Էտա ի՞նչ ի քյո ծոցին, կխալի կուգյա տակ»: Խեփ ուր հերսին գյոմփըմ իտու մեջ իմ գյըլխուն, խավի ծըվեր կոտրան, իմ աչք վ' իրես տեղին-սիվտակ պըռնեց: Ես էլա փախա, հելե էն փախնելն ի, ինչ փախեր իմ:

- Մընայիր տյու, - ասաց իւրին մարթուն. - դե տյու էլ պատմի քյո գյըլխու գյա՛ցած:

Մարթն ասաց. - Ավուր մեկին, իրիկուն էր, մեր որթիյ խապաւ, ես էլա մորթիցի, քոթիցի, պրտիցի: Իմ կնիկն ասաց. «Քյա՛ մարթ, քիչըմ էտա կակղան մսեր ճեոկ տիր, առավտուն անենք քյաբաբ»: Լյոսցավ: Էլա առատուն: Իմ կնիկ թոներ վառեց, մսերն իզար շիշ, իփեց, ինքյ կուտի՝ զի չի տա: Քյանի ես ծեռ ւլարզեցի, շիշըմ տըփեց վեր իմ ծեռաց: Արա' իսկեցի, շիշ ծեռնեն առիցի քյաբըբով: Իմ կնիկ էլավ խասավ դեխ զի: Ես ասի. «Խերիյ չէլա՞վ քյո արած». շիշըմ զարկեցի, փախա: Իմ կնիկ բոռաց. «Յամա՜ն, ես մեռա, յամա՜ն ես մեռա»: Ես թուղի փախա: Հելե՜ էն փախելն ի, ինչխ կվախեմ:

Ասաց. - Ախպերներ, տյուքյ երկուս զա՛ չեք, առեքյ մե-մեյ հ'իսուն կուռուշ, էսա իսունըխինգյ կուռուշ էսա մարթուն կխասնի, տել էն քիչըմ կտրճութեն արեր ի:

Էտա մարթեր կըլնի ճամխի կտնի, ինքն էլ կըլնի կէրթա ուր քյուրոչ տուն:

Քյեռր թաղիս իթալ, մինդար իթալ, ախպեր նըստըցուց, ծեռ իթալ ախպոր վըզնով:

- Ջահնամ էլի դեն, անխոզյի, իմ տուն ավիրեր ես, ըս տարի չում տյուս, էսա թեփե խայց կպիրիցուցես զիկ:

Ասաց, ուր ծոցեն թեփե խայցն իխան, իդիր քյուրոչ տեմ. - Դե կե, խենքյ տյու կանա՞ս ուտես էսա խայց:

- Ախպերիկ, էտա ինչ մանա ի, ի՞նչ կասես, ես չեմ խասկընա:

- Տյու հըմեն օր կէլնես, քյո խալավ կառնես, քյե կչըխչըփես, կէրթաս քյո դոստերաց տուն, քյո քյամին կզարկի, ալըրի ծեթեր կտանի, պետ կմնա: Սըկա մեր խայցն էսա ի, էսա կկիրցուցի զիկ իմ կնիկ:

Քյեռր կասի ախպոր. - Խե՞ղճ միամի՞տ մարթ: Տյու խայց կե, ես քյե ասեմ:

Խայց կկիրիցուցի ախպոր, պառկըցուցի, քընըցուցի չում առատուն: Կըլնի սանդըղըմ կուտա ախպոր քյամակ, կինի առճև ախպոր, կասի. - Քելե էրթանք ծեր տուն:

Կուգյան կխասնեն ախպոր տուն, տյուռ պաց ի, կնիյ տուն չի: Ախպոր կխճի մեչ սանդըղին, էրկու տեղով սանդըղ կծակի, կասի. - Իրիկուն էսա ծակերաց կտիսնաս ի՞նչ կէլնի:

Ախպոր կնիկ կուգյա, ՝ուր տալոչ չճանչընա: Կասի. - Տյու վո՞վ ես, ինչի՞ ես էկե մեր տուն:

Կասի. - Ըըթար որ կա, աստծուն ի, ի՞նչ կէլնի մեկ օր մընամ էսա տեղ, առավտուն էլնեմ էրթամ:

Ախպոր կնիկ մեչ ուր պատրաստութնին ի:

Իրիկուն ի, սև չափալ մարթըմ էկավ: Կընաց նըստավ վերին գյըլեոխ, քյամակն իզա՞րկ պատոցին: Ախպոր կնիկ սեղան. իւրիր առաճ, նոսը՞ր խայմ իտիր առճև, թըխթից սիվտակ: Էլ աստծու պարութեն լըցեց վեր սեղնին:

Էտա կնիկն ասաց ուր ախպոր կնգյան.-Խաւթյուն, էտա մարթ քյե ի՞նչ ի:

Ասաց. - Իմ մարթն ի, վո՞վ ի: Որ ինոր պատիվ չպռնեմ, վի՞ր պըռնեմ, օտարի՞ն:

Գյաղտնիկըմ կըզվավ վեր ախպոր սանդըղին, ասաց. - Խորոտ թամաշա կանե՞ս:

Ասաց. - Սանդըղ պա՛ց, ես ըլնեմ տյուս, ես պատռա:

Կնիյ սանդըղն իպա՛ց, մարթն էլա՛վ տյուս: Ուր թուր քաշեց էտա մարթուն ըսպանեց:

Ասաց. - Կնի՜կ, թե տյու կասեր ալըրի ծեթ քյո քյեռր* ապա՛ էսա սիվտակ խայեր ո՞ր տեղեն էլավ տյուս:

Կնիկն ասաց իրկան. - Ես քյե մեղա աստըծու, էլ պիտի չանեմ էսա պան:

---

* Արտահայտությունը մնում է կիսատ (Ծ.Կ.)

Քյեորն ասայ ախպոր. - Կարմիր կով ուր կաշին կթոնի՞, էն էլ ըսպանի՝ փիր ինոր կուշփ:

Մարթըն ուր կնիյն էլ կսպանի: Տարավ փան մեչ փոսըմ փորեց, էրկուսն էլ պախեց: Էրկու-իրեքյ օր քյեորըն մնայ մոփ ախպեր: Խառոյուց, փըփռեց մեկ ուրիշ խոր որդի կնիյմ կընդավ. փըսակեց վեր ախպոր, էլավ կնաց ուր երկիր: